600.0243.31.08.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 օգոստոսի 2016 թվականի №243Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի №110Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգը հաստատելու մասին» №110Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի՝

   1) 1-ին գլուխը «Արտադրող» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

      «Որակավորված սպառող՝ էլեկտրական էներգիան բացի Բաշխողից նաև այլ անձից գնելու իրավունք ունեցող կամ սեփական կարիքների համար էլեկտրական էներգիան ներկրող՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգում որակավորված սպառողին և որակավորված մատակարարին էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման ցանցեր մուտքի իրավունքի տրամադրման անցումային կանոնների պահանջները բավարարող սպառող».

   2) 1-ին գլխի «Սահմանազատման կետ» պարբերությունում, 2.3 և 2.8 կետերում «Լիցենզավորված անձանց» բառերից հետո լրացնել «, Որակավորված սպառողների» բառերը.

3) 1-ին գլխի «Պայմանագիր» պարբերությունում և 2.6 կետում «Լիցենզավորված անձանց միջև» բառերից հետո լրացնել «, Լիցենզավորված անձանց և Որակավորված սպառողների միջև» բառերը.

4) 4.3 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4.3 Տվյալ Հաշվարկային ժամանակահատվածի համար, Արտադրողի (բացառությամբ՝ Փոխհոսքերն իրականացնողի) կողմից Բաշխողին առաքված էլեկտրաէներգիայի քանակությունը (Wբ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{բ} = W_{ադ} - W_{աա} - W_{գն},$$

որտեղ՝

Wադ-ն Արտադրող-Հաղորդող, Արտադրող-Բաշխող և Արտադրող-Սպառող Սահմանազատման կետերում Արտադրողի կողմից առաքված էլեկտրաէներգիայի գումարային քանակությունն է,

Wաա-ն Արտադրողի կողմից Արտադրող-Հաղորդող և Արտադրող-Բաշխող Սահմանազատման կետերում Արտահանողին առաքված էլեկտրաէներգիան է, որը որոշվում է սույն կարգի 4.5 կետում բերված բանաձևով,

Wգն-ն Արտադրողի կողմից Որակավորված սպառողին առաքված էլեկտրաէներգիայի քանակությունն է՝ համաձայն Արտադրողի և Որակավորված սպառողի միջև կնքված էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրի:».

5) 5.3 կետում «Բաշխողի էլեկտրաէներգիան» բառերը փոխարինել «Բաշխողի և Որակավորված սպառողի էլեկտրաէներգիան» բառերով.

6) 6.3 կետում «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով)» բառերը փոխարինել «Հանձնաժողովի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
31 օգոստոսի 2016թ.